ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1951 *Общественные науки*

Մ. Մկրյան

ՐԱՖՖԻԻ «ԿԱՅԾԵՐ» ՎԵՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Անցյալ դարի 70–80-ական թվականների հայ գրականության նշանավոր գեմքերից մեկը հանդիսանալով՝ Ռաֆֆին խոշոր դեր է կատարել մեր արձակի զարգացման պատմության մեջ։ Ռաֆֆիի ստեղծագործական կյանքում, նայելով աշխարհայացքի մեջ եղած որոշ փոփոխությունների ընթացքին, կարելի է երեք շրջան նշել։ Առաջին շրջանը՝ գրական գործունեության սկզբից մինչև 1877 թիվը, մինչև ռուս-թյուրքական պատերազմը։ Երկրորդ շրջանը՝ պատերազմի և հետագա մի քանի տարիները՝ մինչև Աբդուլհամիդ հետ ընդհարվելը և «Ս շակից» հեռանալը, և երրորդ շրջանը՝ հեղինակի կյանքի վերջին տարիները՝ երբ տպագրվեց նրա լավագույն երկը, ինչպես և անցյալի հայ գրականության արժեքավոր գործերից մեկը՝ «Սամվել» պատմավեպը։

Իր ստեղծագործական կյանքի առաջին շրջանում Ռաֆֆին հանդես է գալիս որպես բուրժուական լիբերալիզմի և լուսավորականության արտահայտիչ։ Բազմաթիվ վեպերի և պատմվածքների (որոնց մի մասը մնացին անավարտ և լույս տեսան մահվանից հետո) նյութը առնելով հայ առևտրա-վաշխառուական բուրժուազիայի և պարսկահայ գյուղացիության կյանքից և բուռն կերպով արծարծելով հասարակության բուրժուական զարգացման տեսակետը, նա խիստ կերպով քննադատում է հետամնաց բուրժուազիային, որի կյանքի հանգամանքներին, կենցաղավարության այլանդակություններին նա շատ լավ ծանոթ էր։ Նա իր մի շարք գործերում («Զահրումար», «Մինն այսպես մյուսն այնպես», «Անմեղ վաճառք», «Ոսկի աքաղաղ» և այլն) ստեղծեց բուրժուազիայի այդ խավերի սոցիալական բնավորության բնորոշ մի քանի դծերը մարմնավորող բացասական կերպարներ (Ճանճուր Իվանիչ, Մասիսյան, Աղա Պարոնով և այլն)։ Ռաֆֆին ուժեղ քննադատության է ենթարկում Պարսկաստանի ֆեոդալական հետամնացությունը, գոյություն ունեցող ֆեոդալական հողատիրության սիստեմը և երբեմն ռեալիստական գծերով մերկացնում է ֆեոդալական բարբարոսական ճնշումն ու կեղեքումը, ցույց տալիս հայ գյուղացիության անլուր տառապանքները, նրա սոսկալի ծանր վիճակը։ Սակայն այս բոլորով հանդերձ, Ռաֆֆին չի բարձրանում ֆեոդալականության դեմ՝ դասակարգային պայքարի գաղափարին։ Այդ է պատճառը, որ թեպետ օտար ֆեոդալների կողքին հայ ֆեոդալ կեղեքիչների (Մելիքների և հոգևորականների) բացասական կերպարներ է տալիս, բայց և ստեղծում է նույն խավից նաև դրական հերոսներ։

Ռաֆֆին այս շրջանի գործերում թեպետ թեմատիկորեն գերազանցապես սոցիալական հարցեր է արծարծում, բայց և դրա հետ միասին, հենց այդ սոցիալական հարցերից բխող և դրանց հետ կապված քաղաքա-

կան խնդիրներ է շոշափում։ Լինելով հայ ազգային շարժման գաղափարախոսներից մեկը, նա որոշակիորեն զարգացնում է ազատագրական ծրագրեր, որոնք էությամբ բուրժուական-իդեալիստական են և արդեն նացիոնալիզմի գծերով համակված։ Սակայն պետք է նշել, որ Ռաֆֆիի աշխարհայացքի այդ հոսքի կողմերը ավելի ուժեղ կերպով երևան են գալիս նրա ստեղծագործության երկրորդ շրջանում, երբ, 1877 թվի պատերազմի կապակցությամբ հայ հասարակության մեջ հուզող խնդիր է դառնում սուլթանական բարբարոսական լծից արևմտահայության ազատագրման հարցը։ Տարիներ առաջ հայ ռևոլյուցիոն-դեմոկրատիայի պարագլուխ մեծ Նալբանդյանը պատմական մեծագույն խորաթափանցությամբ հայ ժողովրդի՝ օտար լծից ազատագրվելու հարցը կապում էր ռուսական ռևոլյուցիայի հաղթանակի և ռուս ժողովրդի օգնության հետ, սակայն Արծրունին, Ռաֆֆին և հայ բուրժուազիայի այլ իդեոլոգներ վախով և ժխտականորեն վերաբերվելով ռուսական ռևոլյուցիային, հույսը դնում էին ցարական կամ արևմտաեվրոպական բուրժուական պետությունների դիպլոմատիայի և իրենց նացիոնալիստական-ռոմանտիկ ռեակցիոն պատկերացումների վրա։ Ռուս-թյուրքական պատերազմի շրջանում, Ռաֆֆիի արևմտահայ կյանքից վերցրած գործերում բուրժուական նացիոնալիզմը ուժեղ արտահայտություն է գտնում նաև «Աշակիթ» հրապարակախոսության ուղղակի ազդեցությամբ։ Այդ շրջանի գործերում («Ջալալեդին», «Խենթ», «Կայծեր») ճիշտ է, Ռաֆֆին պատկերել է սուլթանական Թյուրքիայի ռեակցիոն կարգերը, սուլթանական տիրապետության տակ հեծող հայության կրած զրկանքներն ու տառապանքները և նրանց ֆիզիկական բնաջնջման վայրագ քաղաքականությունը ցույց ավող մի շարք գրվածներ, բայց և այնպես դրանց մեջ մեծ չափերով տեղ գտած բուրժուական նացիոնալիզմը, որն արտահայտվում է մի կողմից հայ ժողովրդի արժանավորությունների նիհիլիստական ժխտման, մյուս կողմից նրան ազգային բացառիկության ինչ որ գծերը վերագրելու և շրջապատի ժողովուրդների նկատմամբ առելություն հրահրելու մեջ, մեծապես արժեքազրկում է այդ գործերը։ Ռաֆֆիի այդ շրջանի գործերից գաղափարական արատավորության առաջնակարգ առավել բնորոշը «Կայծերն» է։

Հայտնի է Շահումյանի խիստ բացասական կարծիքը «Կայծերը» վեպի մասին. «Առաջին հատորը այսօր վերջացրի, բայց ոչ մի հուզում, ոչ մի ոգևորություն...», գրում է նա իր նամակներից մեկում. այնուհետև նա հեղինակին անվանում է «հեքիաթարան», որն ինքն իրեն ոգևորված «երևխայական փիլիսոփայություններ է անում»։ Եվ իրոք Ռաֆֆիի այս վեպը հարուստ է իրականությունը խորապես սխալ ներկայացնող՝ հակապատմական և հակասական դատողություններով, որոնք սխալում են նրա աշխարհայացքի բուրժուական սահմանափակությունից։ Այսպես «Կայծերը» վեպում բացորոշորեն վիրավորանք է հասցված հայ ժողովրդի ազգային արժանապատվությանը։ Ռաֆֆին պնդում է, որ արտաքին նվաճողների դաժան ճնշման, ֆեոդալական կեղեքման և կղերական ռեակցիոն կենսահայեցողության քարոզչության հետևանքով ոչնչացել են ժողովրդի լավագույն հատկությունները։ Նրա դրական հերոսները առիթ բաց չեն թողնում անհեթեթ դատողություններ անելու ժողովրդի՝ հատկապես գյուղացիության մասին։ Միանգամայն անտեսելով Թյուրքիայի լծի տակ արևմտահայության վիճակը

պայմանավորող քաղաքական-սոցիալական հանգամանքները, հեղինակը իր խոսափողների՝ Ավոյի, Կարոյի, Ասլանի և այլոց բերանով հայտնում է շատ արտառոց կարծիքներ։ Ավոն ասում է, թե հայերի մեջ «վաղուց սպանվել է ազատության և ինքնապաշտպանության ոգին», իսկ Ասլանը ուղղակի հայտարարում է, թե «հայը սիրում է օտարի լուծը» (401)։

Մի կողմից կոնկրետ փաստերով ճշմարտացի ցույց տալով, թե ինչպես հայ շահագործող խավերի ներկայացուցիչները (ամիրաները, հոգևորականները և այլն) տիրողների ֆեոդալական բյուրոկրատիայի հետ ստորաբար գործակցում են ժողովրդին ճնշելու գործում, մյուս կողմից հակապատմական և ֆետակար ընդհանրացման է ենթարկում նրանց վարքագիծը՝ հայերի ազգային բնավորության գիծ համարելով այդ։ Արծրունին «Հայի բնավորություն» հոդվածում գրում էր, որ հայի բնավորության «հատկությունը ներքին մատնություն է, հայի ձեռքով հայի դավաճանությունը, վերջապես, այսպես անվանված վատությունը» («Մշակ», 77 թ., № 65) և ահա Բաֆֆի-Ասլանը շտապում է նրանից հետո կրկնել, թե «...Ամեն ժամանակ, երբ հայի համար որևիցե դավաճանություն է պատրաստվում, նրա մեջ խառն է լինում գարձյալ նույնիսկ հայի մատնիչ ձեռքը... դա հայի վատ հատկություններից մեկն է» (199)։

Այս բոլորը միաժամանակ ցույց են տալիս, որ Բաֆֆին շատ թերահավատ է ժողովրդի ուժերի նկատմամբ և ժխտում է ազատագրական պայքար մղելու նրա հնարավորությունները։ Այստեղից էլ հիմնականում բխում է նրա ռոմանտիզմը։

Բաֆֆիի ծայրահեղ սխալ, իդեալիստական դատողությունները ժողովրդի մասին այն տեղն է հասնում, որ ահա «Կայծերը» վեպում նա հարց է դնում վերափոխել ժողովուրդը՝ «Մերկանալ հին մարդը և իրրև նոր մարդ նոր հոգով ու նոր եռանդով գործել դեպի ազնիվը և դեպի լավը» (463)։ Վեպում հենց այս ուղղությամբ աշխատում են Բաֆֆիի դրական հերոսները, բայց ովքեր են դրանք, ինչպես են «մերկացել հին մարդուց» և ինչն է նրանց գործի էությունը։

«Կայծերից» հայերեն հրատարակությանը կցված առաջաբանում, որտեղ առհասարակ անտեսված է Բաֆֆիի նացիոնալիզմը և վեպի այլ արատավոր կողմերը, հեղինակի սխալը և թերությունը գտնում են այն բանի մեջ, որ իբր նա «իր հերոսներին գործի է դնում՝ այնպիսի ժամանակաշրջանում, երբ Արևմտահայաստանում ազգային ազատագրական շարժման ոչ մի նախադրյալ գոյություն չուներ։ Նախ, ճիշտ չէ ժխտել արևմտահայ իրականության մեջ 50—60-ական թվականներին ազգային-ազատագրական շարժման որևէ նախադրյալի գոյությունը, բայց և չափազանց սխալ է, հարցն այնպես պատկերացնել, թե այդ հերոսները՝ Ավոն, Կարոն, Ասլանը և մյուսները, իրենց էությամբ այնպես, ինչպես պատկերացված են վեպում, երբևիցե, առհասարակ կարող էին լինել ազգային ազատագրական շարժման իսկական կազմակերպողներ և ղեկավարներ։

Դեռ իր ժամանակին դեմոկրատ գրող Ղազարոս Աղայանը «Կայծերը»-ի երկրորդ հատորի մասին գրած հոդվածում վեպի մի շարք արժանիքները նշելով հանդերձ (հատկապես «Հայրենիքի զմայլելի վայրերի» նկարագրությունը), մեծ զայրույթով է արձանագրում այն փաստը, որ Բաֆֆին հայ ժողովրդի ապագայի համար աշխատող անձնավորություններ է դարձնում ամենա-

կեղտոտ խաչագող Քավոր Պետրոսին և նրա նման արկածախնդիրների. «Բնավ ներելի չեն,—գրում է Աղայանը,—այն թերությունները, որ վերաբերում են Կայծերի հերոսներին—Ասլանին, Կարոյին, Մուրադին և Քավոր Պետրոսին։ Վերջին երկուսը խաչագողներ են, իսկ առաջին երկուսը իմաստակներ, եթե չասենք շռայլատաններ։ Հեղինակի աչքին չեն երևում ոչ նրանց խաչագողությունը, ոչ նրանց շռայլատանությունը։ Ընդհակառակը, նա ճգնում է ապացուցել, որ նրանք մեկ-մեկ իդեալ են։ Այս թերությունը հեղինակի կողմից առաջ է եկել նրանից, որ նա ամեն տեղ և ամեն բանի մեջ խաչագողություն է տեսնում և այն մարդիկներին է գործող անձ շինում, որոնք ըստ «Կայծերի» «խաչագողի նման հարուստ ընդունակություններ ունեն»։ (Երկեր, հատ. 3, էջ 254)։ Աղայանը առանձնապես զայրալից է խոսում Քավոր Պետրոսի և Մուրադի հանդիպման տեսարանի և հեղինակի՝ նրանց արդարացնող խորհրդածությունների մասին։

Աղայանի պոլեմիկական կրքով արված այս դիտողությունների մեջ անշուշտ ճշմարտություն կա։ Բանն այն է, որ Բաֆֆին ժխտելով, անտեսելով ժողովրդի ազատասիրական ոգին և ձգտումները, հանդես է բերում չարիքի դեմ պայքարող անհատներ, կամ մանր խմբերով «ավազակության կերպարանքով» գործող հերոսներ, որոնք պետք է նաև որոշ ուղղությամբ դաստիարակեին ժողովրդին։ Հասկանալի է, որ այդ հերոսները ժողովրդի ծոցից դուրս եկած վրիժառուներ չեն (կոպիտ սխալ են գործում նրանք, որոնք «Կայծերի» հերոսներին համեմատում են Արովյանի Աղասու հետ) և չեն մարմնավորում ժողովրդական հերոսականությունը, քանի որ Բաֆֆին նման հատկությունը ժողովրդի մեջ ժխտում է։ Այդ հերոսները սովորաբար տեղացիներ չեն, այլ ինչ որ տեղից հանկարծակի հայտնված խորհրդավոր անձնավորություններ, կամ հրաշքով վերափոխված նախկին թափառաշրջիկ ավանտյուրիստներ։ Նրանց գործողությունների ոգի ներշնչող առաջին ուսուցիչը հանդիսացել է որսորդ Ավոն, Սասունի և Մոկաց երկրի իշխանը՝ Մելիք Միսաքը։ Կարոն նույնպես ազնվական ծագում ունի. նա զարա Մելիքների ընտանիքից Միր Մարտոյի տղան էր։ Հատկանշական է, որ Բաֆֆին նույնիսկ «Սալբիի» վեպից սկսած իր իդեային համապատասխան դրական հերոսի մի արտաքին նկարագիր ստեղծեց, որով հափշտակված՝ այնուհետև համարյա թե չփոխեց։ Այսպես, Ռուստամի («Սալբիի») մասին ասում է, թե նրա ականջի և աչքի մեջտեղը մի խոր սպի կար, որը չվնասելով գեղեցկությանը դեմքին տալիս էր «առարկու բացատրություններ»։ Սահրատի («Ջալալեդին») մասին ասում է, թե «ճակատի վրա երևում էր մի խոր սպի, որ տալիս էր նրա վայրենի դեմքին մի առավորություն»։ Ավոյի մասին ասում է, թե «նրա ճակատի վրա դրած խոր սպին մի առանձին արտահայտություն էր տալիս դեմքի խոշոր, միևնույն ժամանակ ավազակային գծագրությանը»։ Վարդանի («Թենթ») մասին գրում է, թե «նրա մեծ, սևորակ աչքերը ավելի ավազակային արտահայտություն ունեին»։ Դարոյի աչքերը «ավելի խոշորացել և կարծես մի կիսավայրենի բնավորություն էին ստացել» և այլն։ Ինչպես երևում է, Բաֆֆին ժողովրդական էպոսի ոգուն հակառակ, իր իդեալ-դրական հերոսների բարեմասնություններ է համարում դեմքի «ավազակային գծագրությունը», «վայրենությունը», «առավորությունը», «կիսավայրենի բնավորությունը» և այլն։

Այս վայրենի բնավորությամբ ավազակատիպ մարդիկ, որոնք ըստ

Բաֆֆին, ժողովրդի նկատմամբ ուսուցչի դեր պիտի կատարեին, որսորդ Ավոյի «դպրոցն» անցնելուց հետո՝ իրենց «ունակությունները» ձեռք են բերում ընկնելով Ամերիկա։ Ավոյի խնդրանոք ոմն «մստեր Ֆիշեր» ամերիկացի ճանապարհորդ իր հետ Ամերիկա է տանում Ասլանին և Կարոյին։ Ջալլադին էլ մի բողոքական միսիոներ Զեյթունից է ուղարկում Ամերիկա սովորելու։ Վեպի ամենաարատավոր կողմերից է այն, որ Բաֆֆին կորցնելով ազգային արժանապատվության զգացումը, քաղցր-մեղցր սենտիմենտալ գույներով նկարագրում է ամերիկյան բուրժուազիայի այսպես կոչված «բարեգործությունը»։ Վեպում ամերիկացիները ներկայացված են իբրև ասիական ժողովուրդների «քաղաքակրթիչներ» և «հայասերներ» այն ժամանակ, երբ բուրժուական «քաղաքակրթության տարածման» գիշատիչ էությունը «Կայծերը» գրվելուց մոտ քսան տարի առաջ ռևոլուցիոն-դեմոկրատ Նալբանդյանը սքանչելի կերպով մերկացրել էր իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» հոչակավոր աշխատության մեջ։ Բաֆֆին, որ մի կողմից տեսնում էր կաթոլիկության և բողոքականության Հայաստանում տարածվելու վտանգը, մյուս կողմից ստորաքարշություն է հանդես բերում արևմուտքի բուրժուական կուլտուրայի նկատմամբ և «մստեր Ֆիշեր»-ի բերանով արտահայտում է այն միտքը, թե «հայերը ընդունակ են լինելու մի հաջողակ միջնորդ՝ լուսավոր աշխարհների կրթությունը Ասիայում տարածելու» (էջ 571)։ Ինչով բացատրել այս։

1877 թվի պատերազմի ժամանակ Արծրունին հակադրվելով «Մեղու» թերթի հրապարակախոսության ուղղությանը, գրում էր, որ «Հայաստանի (խոսքը արևմտահայերի մասին է.—Մ. Մ.), առաջին նպատակը, պատերազմից հետո, պիտի լինի խնդրել, ամեն միջոցներով աշխատել Ռուսաստանին, Անդրկովկասին միանալու, իսկ եթե այդ իրագործվելու չի, Հայաստանի հույսը դարձյալ և միմիայն Ռուսաստանի վրա է» («Մշակ», 77 թ. № 23)։ Իսկ երբ դա իրոք չիրագործվեց, Արծրունին, որ ստեղծված դրության էությունը չըմբռնելով բուրժուական երկրների դիպլոմատիայի ցույցերին հավատ ընծայելով՝ «մարգարեություններ» էր անում (մի բան, որ սքանչելի ծաղրել է հայ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը), մեջտեղ բերեց արևմտահայ հարցի լուծման նացիոնալիստական տեսակետ, որն առավել պարզորոշությամբ արտահայտվեց նրա «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» գործում (1879 թ.)։ Արծրունին գտնում էր, որ «փոքրաթիվ ազգությունը, եթե նա քաղաքակրթության բոլոր հատկանիշները ունի, կարող է կլանել ավելի բազմաթիվ ազգությունը», իսկ հայերի «քաղաքակրթական հատկությունը» համարում էր այն, որ «հայը Ասիայում եվրոպացի է և ստեղծված է նրա համար, որ լինի եվրոպական լուսավորության և քաղաքակրթության միջնորդ Եվրոպայի և Ասիայի մեջ»։ Նման «հիմնավորումով» Արծրունին երբեք հույսը չկտրելով ցարական դիպլոմատիայից, միևնույն ժամանակ հաճախ էլ դիմում էր արևմտաեվրոպական բուրժուական գիշատիչներին և աշխատում «համոզել», որ սրանք Արևմտահայաստանը վերածեն մի ինքնավար նահանգի՝ քրիստոնյա նահանգապետով, որտեղ ապահովված լինի կուլտուրական զարգացման հնարավորությունները։

Բաֆֆին հիմնականում գաղափարակից լինելով Արծրունու հետ, «Կայծեր» վեպում արևմտահայության ապագան ընդհանուր գծերով ճիշտ այնպես

է պատկերացնում, ինչպես Արծրունին ցանկանում էր որ լինի։ Ահա թե ինչու նա հիացմունքով արտահայտվելով ամերիկյան քաղաքակրթության մասին, իր հերոսներին ուղարկում է այնտեղ և ապա որպես «միջնորդներ» վերադարձնում Հայաստան։ «Կայծեր»-ի վերջում պատկերելով, թե ինչ է դարձել Հայաստանը «շատ տարիներ» հետո, Ռաֆֆին գրում է, թե Վանում «Փաշայի պալատի մեջ նստած էր մի քրիստոնյա նահանգապետ», Ավոս և նրա փեսան Ֆարհատը հարուստ հողատերեր են և ունեն խոշոր անասնապահական տնտեսություն, վարպետ Փանոսը դարձել է մեծ ներկարարական գործարանատեր, նույն և Սագոն, որ ունի խոշոր վաճառատուն և գործվածքների գործարաններ, Բերկեն-օղլին դարձել է շոգենավային ընկերության գլխավոր նավապետ և այլն։ Իսկ ինչ եղան քրդերը, հարց է տալիս հեղինակը և պատասխանում, թե «Քաղաքակրթության լույսի առաջ չդիմացան նրանք»։

Նացիոնալիստական մտածողության արդյունք՝ բուրժուական այս «ապագային» հասնելու համար են գործում Ռաֆֆիի վեպի «ավազակային գծագրություն» ունեցող հերոսները։ Իսկ մինչև դրան հասնելը, ըստ հեղինակի պետք էր դաստիարակել ժողովրդին—գյուղացիությանը այնպես, որ նա «ունակ» դառնար ինքնապաշտպանության։ Ռաֆֆին, որն առհասարակ իդեալիստորեն էր դատում իրականության մասին, այդ «գործում» վճռական դեր է հատկացնում դպրոցին։ Անշուշտ, պատահական չէ «Կայծեր» վեպի կոմպոզիցիայի մեջ այն հանգամանքը, որ գործողությունը սկսում է Տեր Թոդիկի դպրոցի պատկերով, այդ դպրոցում Ֆարհատի ստացած դաստիարակության նկարագրությամբ (ըստ երևույթին Ֆարհատը սիմվոլացնում է ժողովուրդը), և վերջանում է Ռշտունիքում Գարոյի դպրոցի նկարագրությամբ և Ֆարհատին «համբրի» մոտ ուսման հանձնելու դրվագով։

Անվիճելի է, որ Ռաֆֆին Տեր Թոդիկի կերպարը և նրա դպրոցի դաստիարակության բացասական էությունը ընութագրող գեղարվեստական արժեքավոր էջեր է ստեղծել, սակայն ինչ է ներկայացնում իրենից Գարոյի դպրոցը, ինչպես էր դաստիարակում մարդկանց և ինչ արդյունքների էր հասել Ռաֆֆիի իդեալ՝ Կարո-ուսուցիչը։ Երբ Ֆարհատը Ասլանի հետ ճանապարհորդելիս հասնում են Ռշտունիքի գյուղերից մեկը, նրանց ուշադրությունը գրավում է գյուղացիների ունեցվածքի ֆանտաստիկական չափերը։ Երեկոյան, արոտից ամբողջ ժամերով գյուղ է մտնում անասունների նախիրը և դեռ ծայրը չի երևում։ Ֆարհատի այն հարցին, թե որտեղից է այդքան հարստություն, գյուղի տանուտերը պատասխանում է, թե դա արդյունք է քրդերի նկատմամբ վերաբերմունքի փոփոխության։ «Երբ նրանք,—ասում է,—մեր մարդու մի մատն էին կտրում, մենք մեր ձեռքն ընկած քրդի գլուխն էինք կտրում... շատ անգամ բոլորովին անմեղ քրդեր, երբ մեր լեռների մեջ պատահում էին, բռնում էինք ու հանգստացնելով, թաղում էինք քարերի տակ» (էջ 490)։ Ահա թե ինչպես է դաստիարակել գյուղացիներին՝ ոչխարի միսը հում ուտող, արյունը կաթի պես խմող ուսուցիչ Կարոն։ Պարզ է, որ նացիոնալիզմը հիմնավորապես խանգարել է հեղինակին ճանաչելու արևմտահայ իրականությունը։ Ռաֆֆին մեծապես սխալվում էր կարծելով, որ սուլթանական դաժան բռնակալության պայմաններում հայ գյուղացին եթե «գիտակցեր», կարող էր քուրդ ցեղապետների դեմ

ինքնապաշտպանություն կազմակերպել և տնտեսական բարգավաճման հասնել այն ժամանակ, երբ նույն ինքը Բաֆֆին երբեմն մատնանշում է օսմանյան ծանր, տնտեսությունները քայքայող հարկահանությունը, և քրդերի մեջ հայերի նկատմամբ թշնամություն հրահրող նույն սուլթանական քաղաքականությունը։

Առհասարակ «Կայծերը» վեպում, թեպետ շատ է խոսվում արևմտահայության տնտեսական ծանր վիճակի մասին, բայց դրա կոնկրետ և ճշմարիտ նկարագրությունը չկա։ Բուրժուական տնտեսության սիրահար հեղինակը երբեմն էլ իր գիտողություններին մեջ հասնում է այնպիսի արտահայտության, որ «թողյալ արտաքին հանգամանքները» ազգատության «գլխավոր և բուն պատճառը», ասում է. «պետք է որոնել իրենց՝ ազգատների մեջ»։ Այս եզրակացության է գալիս Ֆարհատը, երբ տեսնում է վարպետ Փանոսի գործարանը և նրա ամեն բարիքներով լիքը տունը ու նրա շուրջը ազգատության մեջ հեծող բազմաթիվ ընտանիքներ։

«Կայծերը» վեպի բուրժուա-նացիոնալիստական իդեան, ծայրահեղ ռոմանտիզմը, գեղարվեստական տեսակետից այն դարձնում են շատ թույլ մի ստեղծագործություն։ Գրությունը չեն փրկում որոշ իդեական նպատակադրումով՝ վեպի կոմպոզիցիայի էական կողմերից մեկը ներկայացնող Արևմտահայաստանի բնության և զանազան վայրերի ընդարձակ նկարագրությունները, որոնք, սակայն, ըստ էության, հաճախ շատ սխեմատիկ են, որովհետև մանրամասնությունները վերաբերում են հին ավերակ բերդերի և այլ հուշարձանների պատկերմանը։

Այս բոլորը բերում են այն եզրակացության, որ Հայպետհրատի կողմից «Կայծերը»-ի վերահրատարակությունը քաղաքական սխալ է։ Միանգամայն իրավացի է ՀՍԳ Միության Քարտուղարության որոշումը Բաֆֆիի «Կայծեր» վեպի հայերեն (1947 թ.) և ռուսերեն (1949 թ.) հրատարակությունների մասին։ «Կայծերը» վեպի հրատարակությունը քաղաքական սխալ է, որովհետև այդ գրվածքը ժողովուրդների միջև թշնամանք հրահրելու իր բուրժուա-նացիոնալիստական տենդենցով խանգարում է սովետական մարդկանց ինտերնացիոնալ դաստիարակության գործին,—ասված է իրավամբ քարտուղարության այդ որոշման մեջ։ Այդ սխալը ավելի ևս խորանում է նրանով, որ այդ վեպի թե հայերեն և թե ռուսերեն հրատարակությունները տպագրվել են առանց լուրջ առաջարանների և խմբագրական աշխատանքի։ Այսպես, օրինակ, առանց որևէ ծանոթագրության, միանգամայն կամայականորեն «Կայծերը»-ի վերջում ավելացվել են հեղինակի սևագրություններից վերցված մի քանի գլուխներ։

Ինչպես սկզբում նշվեց, Բաֆֆին «Կայծերից» հետո ապրեց իր ստեղծագործական կյանքի երրորդ շրջանը, որը բնութագրվում է առավելապես «Խազ-փուշ» և «Սամվել» գործերով։ Այս գործերը որոշակիորեն զերծ են «Կայծերի» խոշոր արատներից։ Մնալով բուրժուական լիբերալ, Բաֆֆին, սակայն, գնում է դեպի ժողովրդի ուժերի որոշ գիտակցումը, ինչպես և ստեղծում է հայրենիքի պաշտպանության գաղափարը կրող մի այնպիսի գրական հերոս՝ որպիսին է Սամվելը։